# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2022 թվականի N 1211 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 362-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԻԲԱՐԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 362-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի «Անվանումը» սյունակում «Բանկա գլանաձև» բառերը փոխարինել «Տարա» բառով.

2) 1-ին կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում «--0,15 լիտրից պակաս, ապակյա բանկաներ՝ 0.03 լիտր տարողությամբ, անգույն ապակուց 2) 2/1» բառերը փոխարինել «տարաներ՝ 0.03 լիտր տարողությամբ, անգույն ապակուց» բառերով.

3) 2-րդ կետի «Անվանումը» սյունակում «Բանկա պարզ» բառերը փոխարինել «Տարա» բառով.

4) 2-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնպակում «--0,15 լիտր կամ ավելի, բայց 0.33 լիտրից ոչ ավելի, ապակյա բանկաներ՝ 0.212 լիտր տարողությամբ, անգույն ապակուց 2) 1/1» բառերը փոխարինել «ապակյա տարաներ՝ 0.22 լիտր տարողությամբ, անգույն ապակուց» բառերով.

5) 3-րդ կետի «Անվանումը» այնպակում «Բանկա էվոլուցիա» բառերը փոխարինել «Տարա» բառով.

6) 3-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնպակում «1)— 0,25 լիտր կամ ավելի, բայց 0.33 լիտրից ոչ ավելի ապակյա բանկաներ 0.327 լ տարողությամբ 2) 18/1» բառերը փոխարինել «ապակյա տարաներ 0.31 լ տարողությամբ» բառերով.

7) 4-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնպակում «1)—խցանման կափարիչներ կապարից. խցանման կափարիչներ ալյումինից 21 մմ-ից ավելի տրամագծով, խցանման կափարիչներ պտուտակով, բանկաների համար, ալյումինե 2) 1/1 2.1) ct-» բառերը փոխարինել «խցանման կափարիչներ պտուտակով, տարաների համար, ալյումինե» բառերով.

8) 5-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնպակում «1)—խցանման կափարիչներ կապարից. խցանման կափարիչներ ալյումինից 21 մմ-ից ավելի տրամագծով, խցանման կափարիչներ պտուտակով, բանկաների համար, ալյումինե 2) 1/1 2.1) ct-» բառերը փոխարինել «խցանման կափարիչներ պտուտակով, տարաների համար, ալյումինե» բառերով.

9) 6-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնպակում «1)—խցանման կափարիչներ կապարից. խցանման կափարիչներ ալյումինից 21 մմ-ից ավելի տրամագծով, խցանման կափարիչներ պտուտակով, բանկաների համար, ալյումինե 2) 1/1 2.1) ct-» բառերը փոխարինել «խցանման կափարիչներ պտուտակով, տարաների համար, ալյումինե» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ